Այգաբաց

Վարչական ղեկավար՝ Սասունիկ Վանեցյան

Հեռ 094814967

Մակերես՝ 18.6կմ^2

Բնակչություն՝ 764

aygabats.shirak@mta.gov.am

Գյուղ Գյումրիի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 10կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Իլխիաբլի անվանումը: Այգեբաց է վերանվանվել 1946 թ-ին: Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում, բլրապատ հարթավայրում՝ ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով:Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները:
Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1828-1830թթ տեղափոխվել է Արևմտյան ՀայաստանիԲասենի շրջանից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 434, 1873 թ-ին՝ 900, 1914թ-ին՝ 2050, 1959 թ-ին՝ 1089, 1979 թ-ին՝ 617 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 764 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 31%, աշխատունակներ՝ 50%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 149 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Գյուղատնտեության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 811հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 234 և 549 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Այգաբաց

Ինդեքս՝ 2605